Խաստուրայ հայ կաթոլիկաց եկեղեցւոյն մէջ տեսայ մի մաքաղաթեայ Աւետարան, ցարդ նորա մաքաղաթի նման բարակ, փայլուն, լաւ կերպով յղկուած մի տեղ տեսած չեմ։ Նաև գեղեցիկ նկարներ ունի և լաւ գրուած ու մաքուր պահուած։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ԱՅՍ Է.

«Գրեցաւ Հայոց Թուականին,
Հազար հարիւր և ինն ամին,
Ընդ Հովանեաւ Սուրբ Նշանին
Զեռամբ որդւոյ Բարաղամ գրչին,
Որ սկսայ ի յուրբաթին.
Ցունիս ամսոյ տասն և վեցին,
Աւարտեցայ ի շաբաթին,
Ցունիս ամսոյ տասն և վեցին։

Անմիջապէս յետոյ մի այլ յիշատակարան ևս կը շարունակուի։

«Ես Սեոյլեմեզի Տէր Մարտիրոս՝ այն տարին եկայ ի Սօկիւտլու, որ խերբան անկաւ ի յերկիր, խիստ անթիւ ջարդում էրաց, ոչ հայ թողեց և ոչ թուրք, տարին նահանջ էր, գիր տարւոյն ՓԿ էր, որ Տիրացու Ղուկաս գնաց ի Ամամ Ս. Խաչի երկուշաբթին գնաց թուին ՌՃԶԵ ին որն որ հանդիպի սմա, կարդալով, հայր մեր ասելով յիշեցէք և դուք յիշեալ ի Քրիստոսէ ամէն»։

«Մեր տիրացու Ղուկաս գնաց ի Ամամ մեռաւ ի Էջմիածնի ի դուռն հորթբթողու շաբթուն՝ շաբաթ օր մեռաւ թուին ՌՃԶԵ։ Անարժան Սօյլամազցի Տէր Մարտիրոսին ողորմի ամէն, զոր Աստուած սիրող որն որ հանդիպի այս գրիս մէկ հայր մեր ասէք և մէկ մէկ բերան ողորմի ասէք Ղուկասի հոգոյն և դուք յիշեալ ի Քրիստոսէ ամէն»։

Կաթոլիկք նոր եկեղեցի մի շինած են, որոյ դռան վերայ գրուած է։

«Կառուցաւ եկեղեցիս հայ կաթոլիկաց, յանուն Սրբոյն